

ՆՒՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ
ԵՒ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԳԱՏՄՈՒԹԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻՉ ՄԱՆԳԱՍԱՐԵՆՑ

(1415 - 1502)

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1966, p. 4-6, էջ 98)

Յովհաննէս Մանգասարենցի կեանքը իրապէս բազմաչարչար եւ տառապալից կեանք մը եղած է: Իր յիշատակարաններուն մէջ, կը ժամանակադրէ պատահած քաղաքական եւ պատերազմական զէպքերը, կը խօսի աւերածութեանց, մահաւորաժամներու եւ ուրիշ աղէտներու մասին: Կարեւոր են իր տեղեկութիւնները, որոնք մեծ մասամբ ահանատեսի վկայութիւններ են: Կը յիշէ 1437ին Շահուխի, Աքանդարի եւ Ջանշահի մարտնչումները՝ Վանի շուրջ: Եւ կ'աւելցնէ. «Ի պարտնացն Ջանշահին մին անիծեալ Փիրալի անուն ի բերդն Ամիու. եւ հանապազ ելանէր ի բերդէն. եւ գայր ի վերայ երկրիս Արճշոյ եւ Արծկոյ, զոմանս չարչարէր, զոմանս սպանանէր եւ զոմանց զտղայնս վերի առնէր, եւ ծնաւզնն աղետորով սրբտիւ այրէին. եւ աւզնել ոչ կարէին անմեղ զառանցն իւրեանց: Եւս առաւել կըսկիծ տեսաք որ մին տանուտէր եւ Գ (3) աղայ եւ ընդ կին ի մի տան՝ ի տանէն ելանել ոչ կարացին եւ անօրէնքն զտունն վառեալ՝ զնոսս անդ այրեցին որպէս... նահատակ: Եւ զեղբայրն վարդապետին Թումայի այլ կրակով (... չորս տող անընթեռնի...): Զոր սուրբ նահատակաց դասակից արասցէ» (Յիշ. Ա.)¹: Թոյմա վարդապետ Մեծոփեցիի նահատակեալ եղբայրն է, Արխատակէս, որուն նահատակուած ըլլալուն (կրակով) մասին կը յիշուի: Վենետիկի Միսիթարեանց այս

ձեռագրին յիշատակարանին շնորհիւ կը ծանօթանանք որ նահատակութիւնը տեղի ունեցած է 1437ին: Կ'երեւի թէ անհանդարտ պայմաններուն համար՝ Յով. Մանգասարենց ինքն ալ գլխուն ճարր տեսնելու նպատակով փախտական եղած է: Նոյն յիշատակարանին մէջ կը զրէ. «Յայամ չար ժամանակի սկսաք զգիրքս ի քաղաքս Արծկէ. ընդ հովանեաւ ամենամաքուր Աստուածածնիս՝ եւ պատերազմի սուրբ Նշանիս»:

1441ին գարձեալ Արճէշ էր «ընդ հովանեաւ սուրբ եւ հրաշալի Կաթուղիկէ եկեղեցեացս», ուր կը զրէր երկու զրչաղիր, որոնցմէ մին «ընդ հովանեաւ կըմբէթայարի եւ խորանածեւ սուրբ եկեղեցոյս որ յանուն սուրբ Գէորգայ զաւրալարին կա-

1. Շահեկան է վկայութիւնը որ կու տայ Յով. Մանգասարենց իր այս յիշատակարանին մէջ: Աքանդար իր Ջանշահ եղբայրը Վանայ տէր կը նշանակէ, մինչ Թոյմա Մեծոփեցիի համաձայն՝ Աքանդարի որդի Արալին է յիշուած տէր Վանայ: Կ'երեւի թէ Արալի Շամաիի փախուստէն վերջ՝ Ջանշահ տէր նշանակուեցաւ Վանայ: Երբ Շահուխ այս կողմերը արշաւեց, Ջանշահ անոր միացաւ, եւ գարձեալ Վանայ տէր մնաց: Մանգասարենցի 1437ի յիշատակարանին զրութենէն քիչ վերջ, նոյն տարին, Աքանդար յարձակեցաւ Ջանշահի վրայ, սակայն պարտուեցաւ, եւ Աքանդար սպանուեցաւ իր մօր եւ Շահրաթ որդւոյն կողմէ, որոնք զլուխը Ջանշահի տարին: Աքանդարի մահուամբ՝ երկիրը պահ մը խաղաղեցաւ: